

1951 - 2021



70 տարիէ աւելի՝ Սերունդներու Հայեցի Դաստիարակութիւն

ԼՐԱՏՈՒ
ԹԻՒ 2 - ՅՈՒԼԻՍ 2022



Տնօրէնութեան Խօսք

Վահան Թէքէեան Միջնակարգ Վարժարանը այն հարազատ վայրն է, ուր կը մատուցուի առողջ դաստիարակութիւն, ուսում եւ կրթութիւն աւանդելու եւ ստանալու բազմաթիւ միջոցներ՝ իւրայատուկ չափանիշներով: Ուրախ ենք յայտարարելու, որ մեր կրթարանէն ներս անձնակազմ եւ աշակերտութիւն կ'ամբողջացնեն իրար՝ քաղաքավարութեամբ հաղորդակցելով իրարու հետ, միշտ սիրոյ զգացումներով տոգորուած, ինչպէս նաեւ մտածելով ու գործելով լուրջ ու հասուն տրամաբանութեամբ: Մենք, հասնելու համար նպատակադրուած յաջողութեանց, կրթական ասպարէզէն ներս առաջնահերթութիւն կը նկատենք ակադեմական, ընկերային եւ զգացական ուսուցման գործընթացը եւ այդ ուղղութեամբ ալ անհատապէս կը մօտենանք աշակերտներուն ուսուցողական ընթացքներուն՝ արժեւորելով անոնց եզակի

ու թաքուն կարողութիւնները, առաւել՝ դասարաններէն ներս ստեղծելով միասնական կամք եւ համերաշխութիւն: Մենք կ'ուզենք, որ մեր աշակերտները դպրոց յաճախեն անսպառ ժպիտ իրենց դէմքերուն, միշտ գիտութեամբ զինուած եւ յառաջդիմելու փափաքով առլի: Ուրախ ենք, որ մենք կրթական ասպարէզէ ներս վաստկած ենք ակադեմական շնորհալի համբաւ, մեր աշակերտներուն, ծնողներուն, ուսուցիչներուն եւ պաշտօնէութեան տքնաջան ու շարունակական աշխատանքին շնորհիւ: Առ այդ, պահելու համար ձեռք ձգուածը, մեծ պատասխանատուութեամբ կը կազմակերպենք բազմաթիւ ու բազմապիսի ակադեմական դասընթացքներ՝ միաժամանակ աշակերտները մղելով՝ որպէսզի յայտնաբերեն իրենց ինքնութիւնը՝ հայկական եւ լիբանանեան մշակոյթներու ընդմէջէն: Կը հաւատամ, որ իւրաքանչիւր աշակերտ կրնայ յաջողութիւն ձեռք ձգել, եթէ իրեն տրուի յարմար օժանդակութիւն, նաեւ՝ առիթ ու նեցուկ: Այս ուղղութեամբ ալ բոլորս յանձնառու ենք անոնց հայթայթելու ամենաբարձր մակարդակի կրթական փորձառութիւն, որ կը նպաստէ սորվելու եւ աճելու՝ յարգալիք միջավայրի մը մէջ: Արդարեւ, երբ դրական յարաբերութիւններ մշակենք, եւ մասնատրաբար մեր ծրագիրներուն իրագործման համար պայքարինք ու շարունակենք հաւատալ մեր հաստատութեան ցարդ ունեցած ու ունենալիք յաջողութեանց գրաւականին, ինքնաբերաբար նպաստած կ'ըլլանք ուսուցողական առողջ միջավայրի մը ստեղծման: Այլ խօսքով, շնորհիւ այս բոլորին, մեր սիրելի կառոյցը՝ Թէքէեանը, վստահ ենք, որպէս ժամանակակից հաստատութիւն, աւելի քան երբեք պիտի առաւելագոյնս բարգաւաճի ու ծաղկի՝ փառք ու պատիւ բերելով իր հայաբոյր անունին:

Միշտ սիրով՝
Սեւանա Սեմերձեան Տարագծեան

Հոգաբարձության Խօսքը

Թէքէեան Միջնակարգ Վարժարանը յաջողութեամբ աւարտեց իր 2021-2022 ուսումնական տարեշրջանը:

2021 Հոկտեմբերին, վարժարանի տնօրէնուհի նշանակուեցաւ՝ Տիկ. Սեւանա Սեմերճեան-Տարազճեան: Ան՝ իր ուսուցչակազմին եւ պաշտօնէութեան հետ միատեղ խմբային անխոնջ աշխատանքով ոչ միայն յաջողեցաւ հեզասահ տարեշրջան մը իր աւարտին հասցնել այլ՝ գերազանցեց ակնկալուած նպատակները:

Տարին լի էր զանազան մարտահրաւերներով, որոնցմէ մէկն էր երկու տարուան առցանց դասաւանդումէ ետք վերադարձ դէպի առկայ ուսման համակարգ: Օրինակելի էր Տնօրէնուհիին եւ ամբողջ անձնակազմին յանձնառութիւնը, քանի որ անոնք ամէն ջանք ի գործ դրին ուսանողներուն իրենց լաւագոյնը տրամադրելու համար:

Լիբանանի նորագոյն պատմութեան տնտեսական ամենածանր պայմաններուն այս տարի, անցած բոլոր տարիներէն աւելի, վարժարանս կրցաւ յաղթահարել անոր վրայ ծառացած տնտեսական զանազան խոչընդոտներ:

Հոգաբարձութիւնը ճիշտ ժամանակին կրցաւ նախաձեռնել զանազան միջոցներ՝ մեղմելու համար վարժարանի ուսուցիչներուն և անձնակազմին տնտեսական առօրեայ մտահոգութիւնները:

Երկրորդ տարին ըլլալով փորձեցինք թեթեւացնել նաեւ մեր աշակերտներու ծնողներուն վրայ ծառացած տնտեսական բեռը՝ զանոնք զերծ պահելով ուսման տարեկան կրթաթոշկէն: Ուրախութեամբ կը յայտարարենք թէ յաջորդ ուսումնական տարեշրջանի՝ 2022-23-ի կրթաթոշակը դարձեալ պիտի ըլլայ անվճար:

Վահան Թէքէեան վարժարանի Հոգաբարձութեան անունով, մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնեմ Թէքէեան Մշակութային Միութեան յարգարժան Ատենապետին՝ Տիար Յակոբ Գասարճեանին եւ անդամներուն, ի մասնաւորին մեր գլխաւոր բարերարներուն՝ Տէր և Տիկ. Սէմ և Սիլվա Սիմոնեաններուն, ինչպէս նաեւ բոլոր այլ նուիրատուներուն որոնք իրենց նիւթաբարոյական առատաձեռն աջակցութեան շնորհիւ, հնարաւոր կը դարձնեն շարունակել մեր պատուաբեր աշխատանքը, ապահովելով արժանի կրթութիւն մեր արժանաւոր սաներուն:

Անհամբեր կը սպասենք միասնաբար բոլորելու բեղուն գործունէութեամբ յաջող տարեշրջան մը եւս:

Անի Լաչինեան Մակարեան

Ատենապետուհի

Վահան Թէքէեան Միջն. Վարժարանի Հոգաբարձութեան

Ամփոփ տեղեկագիր Վահան Թեքեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն 2021-2022 ուսումնական տարուան (Գարուն - Ամառ)

Ապրիլին մեր վարժարանի մանկապարտէզը օժտուեցաւ մանկավարժական եւ պատմութեան գիրքերով բարեսիրտ բարերարի մը կողմէ: Վահան Թեքեան Վարժարանի Մանկապարտէզի փոքրիկները երախտապարտութեամբ կու գան շնորհակալութիւն յայտնելու բարեսիրտ եւ մեծահոգի բարերարին, որ ծոխացուց մեր գրադարանը տասնեակ մը մանկավարժական եւ պատմութեան գիրքերով:



Մեր փոքրիկները ուրախ ժամանակ անցուցին մեր վարժարանի խոհանոցը լաւաշ
հաց եփելով Օրդ. Փաթիլ Պալապանեանին հետ:



Նկարագիրի Կրթութեան Ծրագիր



Ազնուութիւն եւ Յարգանք



Հանդուրժողականութիւն



Բաժնեկցիլ

Կրթական եւ Մշակութային Պտոյտներ

Արցախէն Պատանիներու Երաժշտական Ելոյթ

Ապրիլ 4 2022-ին, Վահան Թէքէեան Միջն. վարժարանի խումբ մը աշակերտներ (Նախ. Դ.- Միջն. Գ.), իրենց դաստիարակներուն հետ միասին ներկայ գտնուեցան Պուրժ Զամուտի ,Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ տեղի ունեցած ,Ղօղանջ Վերապրումի երաժշտական ելոյթին:



Ձեզ կը ներկայացնենք մեր աշակերտներու կողմէ գրուած քանի մը տպաւորութիւններ՝ Արցախի պատանիներուն կատարած մշակութային յայտագիրի մասին:

Աշակերտներու Տպաւորութիւնները

Պատանիները, որոնք հերոսական Արցախէն Լիբանան ժամանած էին, հոյակապ երաժշտական ելոյթներով հմայեցին բոլոր ներկաները:

Զիս տպաւորեց Կարէն Եսայեանը իր, Մախմուդ Աղշիկ տուտուկի կատարումով: Ան նաեւ հայրենի տուտակահարի մը թողնիկն է:

*Մերի Ղազարեան
Նախ. Ե. Դասարան*

Երբ ականդիր եղայ Արցախէն ժամանած պատանիներուն ելոյթը, սրտիս մէջ նոր Զայաստան մը ծնաւ, կարօտներս արթնցաւ տուտուկի հնչիւններուն տակ, քանոնին քաղցրահնչիւն ձայնով հոգիս սաւառնեցաւ հեռուն, իսկ տիղի զարկերուն հետ զինուորի հոգին արթնցաւ:

*Պերժ Գոմպէճեան
Նախ. Զ. Դասարան*



Արցախի պատանիներուն ելոյթը որքան հմայիչ էր նոյնքան ալ յուզիչ: Ուղղակի զգացի թէ կ'ապրիմ Արցախեան հողերուն վրայ եւ կը վայելեմ անոր գեղեցիկ բնութիւնը:

Փաթիլ Փափազեան
Միջն. Ա. Դասարան

Շատ ուրախ եմ, որ առիթը ունեցայ շուրջ երկու ժամ վայելելու Արցախէն ժամանած մեր սիրելի քոյր-եղբայրներուն ելոյթը: Հիացայ իրենց արուեստի բարձրաձաշակ կատարումներով, գիտնալով որ շատ դժուար պայմաններու կողքին, տակաւին մեզ ցոյց տուին իրենց յոյսը, ջանքը եւ սէրը կեանքի հանդէպ:

Ալեքս Գոճայեան
Միջն. Բ. Դասարան

Շնորհակալութիւն Արցախէն ժամանած երաժշտագէտ պատանիներուն, որոնք մեզի ուրախացուցին իրենց տաղանդներով: Թէեւ Արցախի մեծ մասը կորսնցուցինք, սակայն այս պատանիները փաստեցին, որ հալը իր պատմութեան ընթացքին միշտ ալ պայքարած է իր մշակոյթի պահպանման համար:

Սէրլի Ստեփան
Միջն. Բ. Դասարան

Մեծ ուրախութեամբ դիտեցի եւ զմայլեցայ Արցախի պատանիներու երաժշտական եւ ասմունքի կատարումներով: Տեսայ իրենց մէջ կորով եւ յոյս կեանքի հանդէպ:

Փաթիլ Պետիկեան
Միջն. Գ. Դասարան

Այցելութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիան Թանգարան

7 Ապրիլ 2022-ին, մեր վարժարանի՝ Նախ. Դ.-Միջն. Գ. դասարանի աշակերտները այցելեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիան Թանգարանը:



Աշակերտների Տպաւորութիւնները



7 Ապրիլ 2022-ին, երբ մեր վարժարանի աշակերտներով եւ դաստիարակներով այցելեցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի, Կիլիկիա թանգարանը: Իւրաքանչիւր յարկին մէջ տեսայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութիւնը ներկայացնող եկեղեցական թանկարժէք իրեր եւ արուեստի գործեր:

Կալիա Նորշահեան
Նախ. Զ. Դասարան

Երբ մօտեցայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, Կիլիկիա թանգարանի մէջ տեղադրուած միւռնի կաթսայի գրութեան, սիրտս խայտաց, երբ կարդացի, թէ ան նուիրուած էր Պոլսահայ Ամիրա Յարութիւն Պէգնեանի կողմէ, որովհետեւ վերջերս հայ մշակոյթի դասապահին ընդմէջէն սորվեցայ արեւմտահայոց մտաւոր զարթոնքի մասին:

Անտրէաս Գաբրիէլեան
Միջն. Ա. Դասարան

Դպրոցական կազմով, Ապրիլ 7-ին այցելեցինք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, Կիլիկիա թանգարանը, ուր տեսայ բազմաթիւ պատմական իրեր: Հիացած դիտեցի զանոնք, եւ ռուպէ մը մտածեցի, թէ որպէս հայ պատանի պէտք է հպարտ զգամ ազգութիւնովս եւ ես ալ իմ կարգիս ջանամ ըլլալ հայ ազգին արժանի զաւակ:

Այնտեղ տեսայ հայ մշակոյթի դասապահերու ընթացքին սորված հայ ազգի տիտաններէն՝ Կոմիտաս վաղապետի քանդակը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Խրիմեան Հայրիկի լուսանկարներն ու նամակը:

Ալեքս Գոճայեան
Միջն. Բ. Դասարան

Այցելելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիա թանգարան, հոն տեսայ այն առարկաները, որոնք փրկուած էին 1915-ին, որոնք Սիսէն Հալէպ փոխադրուած էին խղճալի պայմաններու մէջ եւ ապա հասած՝ Անթիլիաս: Այդ թանկագին առարկաներէն էին՝ Ս.Միւռնի կաթսան, դրամներ, խաչքարեր, ձեռագիր գիրքեր, ծիսական զգեստներ, մետաքսէ չինական վարագոյրներ եւ արծաթէ աշտանակներ, որոնք կը դրուէին խորանի երկու կողմերը: Մեզի համար այդ առարկաները կը ներկայացնեն հայկական կրօնական եւ արուեստի արժէքներ:

Վալէնթինա Սրապիոնեան
Միջն. Գ դասարան

Զատիկուայ Առթիւ Զաճելի Մթնոլորտ

11 Ապրիլ 2022-ին, մեր վարժարանի Նախ. Ա-Գ դասարանի աշակերտները եւ մանկապարտեզի փոքրիկները այցելեցին Պուրճ Զամուտի "Մասթըր Սոլ" առեւտրային շէնքը, ուր զուարճացան զատկուան զարդարանքներով, ունենալով հաճելի պահեր:



Զորեքշաբթի, 13 Ապրիլ 2022-ին, մեր աշակերտները տօնեցին Զատիկը: Շնորհակալութիւն բոլոր մեր նուիրատուներուն, որոնք ամէն ջանք դնելով յաջողցուցին մեր վարժարանին Սրբ. Զատկուան տօնակատարութիւնը:



Հայկական Գորգերու եւ Չարդանախշերու Աշխատանոցային Ծրագիր

12 Ապրիլ 2022-ին, մեր վարժարանը այցելեցին Հայկազեան Համալսարանի ուսանողական հարցերու բաժնին կողմէ հրաւիրուած՝ Երեւանի Յովհաննէս Շարամբեանի անուան ժողովրդական ստեղծագործութիւններու թանգարանէն հայկական գորգերու եւ Չարդանախշերու երկու մասնագէտներ՝ Գայեանէ Ասլանեան եւ Աննա Մանուկեան:



Աշակերտներու Տպաւորութիւնները

Երեքշաբթի առտու դպրոցին սրահը մեզ դիմաւորեցին Հայաստանէն եկած հիւրեր, որոնք նախ պաստառի վրայ մեզի ցուցադրեցին գորգագործութեան մասին տեսանիւթ մը, որմէ ետք մեզի բաժնեցին տախտակէ սալիկներ եւ ջրաներկ: Իւրաքանչիւր աշակերտ ներկեց իրեն բաժին ինկած Չարդանախշը: Հրաշալի են հայկական գորգերուն գոյները, մանաւանդ կապոյտը եւ որդանկարմիրը, որ չի խամրիր:
Տեսանք նաեւ՝ թէ ինչպէս տախտակին վրայ իրարու մօտ գամեր կը գամուին ու անոնց վրայ ոչխարի բուրդէ պատրաստուած դերձանով կը հիւսուի գորգը:

Հրակ Զէօրիւքեան
Նախ. Դ.

Շատ տպաւորիչ էին մեր հայկական գորգերու Չարդանախշերը՝ երկրաչափական, կենդանական եւ բուսածաղկային տեսակները, իրենց իւրայատուկ երանգներով գունաւորուած: Ես այս տեսակներուն մէջէն նախընտրեցի երկրաչափականը: Հպարտ եմ իմ ազգային ինքնութեամբ:

Աղասի Փափագեան
Նախ. Ե.




Շատ սիրեցի հայկական գորգերուն գմայլելի գոյներու ներդաշնակութիւնը, ինչպէս նաեւ՝ բազմատեսակ Չարդանախշերը, որոնցմէ իւրաքանչիւր ունի իր նշանակութիւնը: Գեղեցիկ էր Արծուագորգը, որուն նախընտրեցի նման էր արծիւի մը՝ իր բացուած թերթով: Իսկ Մեմլինգը՝ իր երկրաչափական նախշերով կը ներկայացնէր Արցախի լեռնոտ բնութիւնը: Իտալացիք այնքան սիրած են վերջինս, որ իրենց պալատներն ու եկեղեցիները Չարդարած են այդ գորգերով: Կեցցեն ստեղծագործ հայու ձեռքերը:

Վանեսսա Ապու Նատէր
Նախ. Զ.

Հայոց Ցեղասպանության Ոգեկոչումը

12 Ապրիլ 2022-ին, տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանության 107-ամեակի ոգեկոչումը, ներկայությամբ մեր վարժարանի հոգաբարձության փոխ ատենապետ Տիար՝ Պերժ Արապեանի, հիր բանախօս՝ Տիար Համբիկ Մարտիրոսեանի:



Ընդհանուր Զարգացման Մրցում

6 Մայիս 2022-ին, խանդավառ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ ընդհանուր զարգացման մրցում, մասնակցութեամբ նախակրթարան Զ., ինչպէս նաեւ միջնակարգ Ա. Բ. Գ. դասարաններու խումբ մը աշակերտներու: Աւարտին՝ յաղթող ծանչցուեցաւ Արարատ խումբը, որուն մասնակիցները արժանացան յատուկ գնահատագիրներու:



Ճիշդ Զնչենք

Մայիս 27, 2022-ին , տեղի ունեցաւ ճիշդ հնչենք մրցոյթը Անգլերէն լեզուով, Նախ. Դ. դասարանէն Միջն. Բ. դասարան: Աւարտին՝ յաղթող մասնակիցները արժանացան յատուկ գնահատագիրներու:




Վերջին Զանգ

30 Մայիս 2022-ին, մեր վարժարանի Յ. Պարսամեան սրահին ներս տեղի ունեցավ Վերջին Զանգ-ի նշումը:



Մարզական Օր

Ամառային քննությունները չսկսած, ունեցանք մեր տարեկան Մարզական Օրը, որ տեղի ունեցավ Ուրբաթ 3 Յունիս 2022-ին: Ան անցավ մեծ խանդավառությամբ, որուն ներկայ եղան մեր վարժարանի նախկին շրջանաւարտներէն ոմանք, որոնք նաեւ իրենց մասնակցութիւնը բերին մարզական խաղերուն:





Մեր Շուկան

8 Մայիս 2022-ին, Պեյրուֆի, Պուրճ Համուտի Քաղաքապետարանը, Մասթըր Մոլին մէջ կազմակերպեց, Մեր Շուկան 2 տօնավաճառը: Վահան Թէքէեան Միջն. վարժարանի նախակրթարան Զ. դասարանի աշակերտուի՝ Կալիա Նորշահեան եւ Միջնակարգ Գ. դասարանի աշակերտուի՝ Սելին Տրդատեան ելոյթ ունեցան գեղեցիկ նագ պարով, որուն պարուսոյցն էր Օրդ. Փաթիլ Պալապանեան:



Քոյր Դպրոցներ

1 Յունիս 2022-ին, Յ. Պարսամեան սրահէն ներս կը տիրէր իրայատուկ մթնոլորտ մը: Վահան Թէքէեան վարժարանի աշակերտները հետաքրքրութեամբ դիտեցին Արցախի Մաղաուզի դպրոցին կողմէ պատրաստուած ծանօթացման տեսաերիզ մը: Հարկ է նշել, որ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանը եւ Արցախի Մաղաուզ գիւղի դպրոցները դարձած են քոյր դպրոցներ: Պրն. Աւետիս Տիպան հակիրճ կերպով տուաւ տեսաերիզի բովանդակութեան մանրամասնութիւնները:



Մրցանքներ

Կազմակերպութեամբ Համազգայինի Գեղարուեստի դպրոցներու ,Թորոս Ռոսլին Կերպարուեստի դպրոցի, Մայիս 27 2022-ին, տեղի ունեցաւ գծագրութեան մրցանք, որուն մասնակցեցան նաեւ Պէյրութի Վահան Թէքէեան Միջն. վարժարանի խումբ մը աշակերտներ:



Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ մեր վարժարանի Միջն. Ա. դասարանէն՝ Սելենա Քէսուէեան արժանացաւ 2-րդ մրցանակին Գ. խմբակի մէջ, որուն գծագրութեան նիւթն էր, Ճամբորդութիւն Դէպի Մոլորակ:


Յունիս 4, 2022-ին տեղի ունեցաւ, Միեր Չուլիաճեան շարադրական մրցանքը Ազգային Առաջնորդարանի, Երջօ Սամուէլեան Եռագոյն սրահին մէջ, որուն մասնակցեցան նաեւ Պէյրութի Միջն. Ա. Դասարանէն՝ Փաթիլ Փափագեան եւ Միջն. Բ. Դասարանէն՝ Ալեքս Գոճաեան:



Ուսուցիչի Վերաորակաւորում

Յունիս 10, 11-ին Տիկ. Ժան Տարբը մասնակցեցաւ LAH-ի կողմէ պատրաստուած Արաբերէն Պատմութեան վերապատրաստութեան դասընթացին:

Մեր դաս-խաղի վրայ հիմնուած գործունէութիւնները



Ամավերջի Հանդես ու Վկայականաց Բաշխում

Կիրակի 3 Յուլիս 2022, առաւօտեան ժամը 11:00-ին, Յակոբ Պարսամեան սրահէն ներս տեղի ունեցաւ Ազգային բարերար եւ գործարար՝ հպարտ Թէքէեանցի Տէր եւ Տիկ. Սէմ եւ Սիլվա Սիմոնեան 2021-2022 տարեշրջանի հունձքի ամավերջի հանդեսն ու վկայականաց բաշխումը:

Հանդիսութեան գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:

Հանդիսութեան աւարտին ընթերցուեցաւ վարժարանիս բարերար Տիար՝ Սէմ Սիմոնեանի սրտի խօսքը ուղղուած ընթացաւարտ եւ շրջանաւարտ աշակերտութեան:







Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574